ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Արցախի Տիրախնամ Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Պարգև Եպիսկոպոս Մարտիրոսեանէն Ձեր անհուն սիրոյն և նուիրուածութեան մասին հանդէպ Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիին, անոր Հոգևոր Կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Արցախի մեր Թեմին ու ժողովուրդին:

Որպէս զաւակ Արցախեան հողի՝ Դուք Ձեր հայկական հարազատ նախաձեռնութեան ոգիով և տքնաջան աշխատանքով կեանքի լաւագոյն պայմաններ ստեղծեցիք Ձեր և Ձեր ընտանիքի համար: Այդ բոլորի մէջ Դուք չմոռացաք Ձեր Մեծ Ընտանիքը, բոլորիս հոգևոր մայրն ու սնունդատուն՝ Հայոց Առաքելական Եկեղեցին և անոր տագնապահար, բայց քաջահոգի Արցախի զաւակները: Գանձասարի պատմական վանքի վերանորոգութեան բարերարութիւնը Ձեր տիկնոջ՝ Թամարայի հետ միասին ստանձնեցիք, ինչ որ մեծ բարիք մըն է մեր Եկեղեցւոյ վերականգնման համար Արցախի մէջ: Դուք մատուցիք նաև բազմօգուտ ծառայութիւններ կարիքաւոր ընտանիքներու, ապրուստի պայմաններ հայթայթելով և զօրավիգ կանգնելով մեր Արցախ պետութեան և ժողովուրդին:

Ի գնահատութիւն Ձեր օգտաշատ ծառայութիւնների, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն շքանշանը

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր տիկնոջ ու զաւակներուն և Հայրապետեան ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջ և բարգաւաճ կեանք անսպառ և անստուեր երջանկութեամբ առլցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2 Ցունիսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 94

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻՍՐ ՏԻԳՐԱՆ ԻԶՄԻՐԼԵԱՆԻՆ* ՈՐ Ի ԺԸՆԵԻ, ԶՈՒԻՑԵՐԻԱ

Մեզի համար հոգեկան խոր ուրախութիւն եղաւ անցեալ տարի Յունիսին Ձեզ անձամբ ճանչնալ Ժընևի մէջ Մեր անդրանիկ այցելութեան առթիւ:

Մեծէն տեղեկացանք Ձեր և Իզմիրլեան մեծ ընտանիքի սիրոյ և նուիրուածութեան մասին հանդէպ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցիին, մեր հայկական մշակոյթին և մեր մայր հայրենիքին: Ձեր անմոռանալի ծնողքէն՝ Սարգիս և Մարի Իզմիրլեաններէն ժառանգած մարդկային ազնուութեան, եկեղեցասիրութեան և հայրենասիրութեան ոգին և զգացումները Դուք գիտցաք արտայայտել գործնական եղանակներով Ձեր մեծ սատարը բերելով Հայաստանի մեր Պետական Համալսարանի գրադարանի շէնքին վերանորոգութեանը, արդիականացումին, և բարեզարդումին ի յիշատակ Ձեր թանկագին ծնողաց:

Ի գնահատութիւն Ձեր բարերարութեան և բազում այլ ծառայութեանց մեր Ս. Եկեղեցիին, ազգին, հայրենիքին և պետութեանը, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի հոգևոր ծննդավայր Ս. Էջմիածնի Մայր Աթոռի բարձրագոյն շքանշանը

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր տիկնոջ, Ձեր քոյրերուն և Իզմիրլեան ընտանիքի բոլոր անդամներուն պարգևէ քաջառողջ կեանք, լիառատ պտղաբերութիւն Ձեր գործոց, և անսպառ ու անստուեր երշանկութիւն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 7 Յունիսի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 95

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏՈՔԹ. ԿԱՐՕ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Երկար տարիներէ ի վեր հետևած ենք Ձեր գործունէութեան, յատկապէս Երուսաղէմի և Միացեալ Նահանգներու մէջ: Ձեզ տեսած ենք միշտ հոգեշաղախուած մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ, հայ ազգի, հայրենիքի և հայ մշակոյթի, հայ գիրի և գրականութեան կենդանի աւանդութեանց և արժէքներուն հետ:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պաշտօնական ամսագիրին՝ "Սիոն"ի մէջ Ձեր բանաստեղծական կտորները հոգեկան վայելքի առիթներ են ընծայած Մեզի և բազմաթիւ գրասէր ու գեղարուեստասէր անձերու Ձեր արձակ վիպական հատորները նոր տարածքներ կը բանան հայ գրականութեան մէջ:

Սիրոյ ջերմ զգացումով ընդառաջելով նաև մեր Հոգևոր Եղբօր՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի յանձնարարութեան, ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմաբեղուն գրական և հասարակական ծառայութեանց մեր Ս. Եկեղեցիին և հայոց նոր գրականութեան՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն շքանշանը

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԷՈՐՉԻ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեր կեանքի այս 75-ամեայ հանգրուանին Ձեզի շնորհէ քաջառողջ և մշտանորոգ ոյժ և կորով շարունակելու Ձեր սպասը հայ ժողովուրդին և հայոց գրականութեան նորանոր հատորներով ճոխացնելով մեր արդի գրականութիւնը, մանաւանդ ափիտքեան հայ կեանքի պայմաններուն ներքև, ուր հայ գիրը և՛ հայկական հող է, և՛ հայրենական շունչ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 9 Յունիսի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 96

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻՍՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ՅԱՒՍՏՐԻԱ

Ահա շուրջ մէկ տարիէ ի վեր Ձեզ անձամբ ճանչնալու ուրախութիւնն ենք ունեցած և Ձեր մէջ տեսած ենք մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ և Մայր Հայրենիքի՝ Հայաստանի հանդէպ խոր ու անկեղծ սէրը և նուիրումը:

Դուք եղաք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Ձեր անքակտելի կապուածութիւնը ցոյց տուիք մեր հոգևոր սրբազնագոյն կեդրոնին, մեր քրիստոնէական ծննդավայր Ս. Էջմիածնին հանդէպ:

Մենք Ձեզ անձամբ տեսանք նաև Վիեննայի մէջ Աւստրիոյ հայութեան Մեր տուած անդրանիկ Հովուապետական այցելութեան առթիւ: Աւստրիոյ Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանէն տեղեկացանք Ձեր բազում ծառայութեանց մասին:

Սիրայօժար կերպով ստանձնեցիք Հայաստանի պատմական եկեղեցիներէն մէկուն՝ Բիւրականի Ս. Յովհաննէս եկեղեցիին վերանորոգութեան բարերարութիւնը:

Ի գնահատութիւն Ձեր բազում ծառայութեանց և օրինակելի սիրոյն հանդէպ մեր Ս. Եկեղեցիին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և մայր հայրենիքին, այսու Հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռի բարձրագոյն շքանշանը

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր Տիկնոջ, Ձեր զաւակներուն և թոռնիկներուն պարգևէ քաջառողջ և երջանկալից կեանք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14 Յուլիսի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 97

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԱՐՄԵՆԱԿ ԻԹԻՃԵԱՆԻ* ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ՅԱՒՍՏՐԻԱ

Սրտի խոր գոհունակութիւն զգացինք տեղեկանալով Աւստրիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանէն Ձեր նուիրեալ աշխատանքի մասին Աւստրիոյ հայ համայնքի մէջ: Մենք ալ ուրախութիւնն ունեցանք անձամբ վկայ ըլլալու Ձեր անձնուէր ոգիին Մեր Հայրապետական անդրանիկ այցելութեան ընթացքին յԱւստրիա անցնող ցունցիսին:

Ուրախութեամբ կ'ողջունենք Ձեզ և բարձրօրէն կը գնահատենք Ձեր զոհողութիւնը ու քաջութիւնը, որով Ձեր երիտասարդ տարիքին դուք ստանձնեցիք Աւստրիոյ Հայ Եկեղեցական Համայնքի Վարչութեան ատենապետի պաշտօնը, զոր կը շարունակէք կատարել պատասխանատուութեան բարձր զգացումով, առանց խնայելու Ձեր ջանքն ու աշխատանքը:

Իւթիճեան ընտանիքը, յատկապէս լուսահոգի Եղիշէ Ծ. Վրդ. Իւթիճեանը, կարևորագոյն դեր խաղացած են Աւստրիոյ մեր Ս. Եկեղեցւոյ կեանքին մէջ: Մենք ուրախ ենք որ Դուք կը շարունակէք այդ աւանդը:

Ի գնահատութիւն Ձեր եռանդուն գործունէութեան և բեղուն աշխատանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՀՆԱՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզ և Իւթուճեան ընտանիքի բոլոր անդամներուն, ինչպէս նաև Աւստրիոյ Հայ Եկեղեցական Համայնքի Վարչութեան անդամներուն շնորհէ երկար կեանք և բեղմնալից ծառայութիւն ի վայելումն Աւստրիոյ մեր հաւատացեալ ժողովրդեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 11 Օգոստոսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 101

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԳԱՐԼՈՍ ԲՈԹԻԿԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ՅԱՐԺԱՆԹԻՆ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Արժանթինի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Գիսակ Արքեպիսկոպոս Մուրատեանէն, որ բազում տարիներէ ի վեր Դուք Ձեր սպասը անսակարկ և անվերապահ կերպով կ'ընծայէք մեր Ս. Եկեղեցիին, և հայ ազգին ու հայրենիքին: Մենք ալ Ձեզ անձամբ ճանչնալու առիթներ ենք ունեցած և Ձեր մէջ տեսած ենք ճշմարիտ եկեղեցասիրութեան և հայրենասիրութեան ոգին:

Տարիներ շարունակ եղաք թե ու թիկունք Արժանթինի մեր Հայոց Թեմին ու սիրայօժար կերպով վերանորոգեցիք Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցին: "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամին բերիք Ձեր գործօն մասնակցութիւնը: Ցաճախ այցելեցիք Հայաստան և Արցախ և զօրավիգ կանգնեցաք մեր կարիքաւոր, բայց չարքաշ ու տոկուն ժողովուրդին:

Դուք նաև մնացիք միշտ ջերմ հաւատացողը մեր ազգի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որ այս շրջանին մտած է եռանդուն գործունէութեան շարժումի մէջ քրիստոնէական մեր սուրբ հաւատքը և մեր հայրերու եկեղեցական սուրբ աւանդութիւնները վերանորոգելու համար մեր այսօրուան ազատ ու անկախ Հանրապետութեամբ օժտուած Հայաստան աշխարհի մէջ:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և վաստակաշատ գործունէութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն շքանշանը՝

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջ և երկար կեանք և յարաճուն արդիւնաւորութիւն Ձեր գործունէութեան, անստուեր և անսպառ երջանկութեամբ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25 Յուլիսի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 100

ՍԻՐԵՑԵԱԼ ԴՍՏԵՐ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԿԻՆ ՄԱՐԹԱ ՎԱՐԴԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ՅԱՒՍՏՐԻԱ

Բազում տարիներէ ի վեր լսեր էինք Վարդեան մեծ ընտանիքի մասին, որ Աւստրիայի մեր հայ համայնքի կեանքին բերած է միշտ իր յայնագոյն և օգտակարագոյն բաժինը: Տեղեկացել էինք նաև Աւստրիոյ հայոց Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանէն Ձեր հանգուցեալ ամուսնոյն՝ Նուպարին և Ձեր բերած առատաձեռն օժանդակութեան մասին Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Խորապէս ուրախ զգացինք երբ Աւստրիոյ հայութեան Մեր տուած անդրանիկ հովուապետական այցելութեան առիթով պատեհութիւնն ունեցանք Ձեզ անձամբ տեսնելու և Ձեր մէջ գտնելու բարի և ազնիւ հոգի մը, որուն սէրը հանդէպ Աստուծոյ, Եկեղեցւոյն և ազգին միշտ վառ կը մնայ: Մեծապէս ազդուեցանք Ձեր արտաքուստ բարերարութենէն, որով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նուիրաբերեցիք իշխանական գումար մը (յիսուն հազար տոլարի) որը պիտի յատկացնենք Մեր Եկեղեցւոյ 1700-ամեակի ծրագիրներուն:

Ի գնահատութիւն Ձեր բազում տարիներու բարեսիրական գործերուն այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ՝ աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ երկար տարիներ շնորհէ Ձեզի առողջութեան և երջանկութեան բարիքներով առլցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14 Ցուլիսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 98

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՉԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՆԱՉԱՐԷԹ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՀԻՍԹԸՆ, ԹԵՔՍԱՍ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Մեզի համար սրտի խոր գոհունակութիւն եղաւ իմանալ Ամերիկահայոց Արևելեան Թեմի Բարեջան Առաջնորդ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանէն Ձեր երկար տարիներու հաւատաւոր և նուիրեալ գործունէութեան մասին ի սպաս մեր Հայց. Ս. Եկեղեցւոյ, Հիսթընի մէջ, ի Թեքսաս և ընդհանրապէս Ամերիկահայոց Արևելեան Թեմի առաքելութեան մարզին մէջ:

Մենք ալ Ձեզ անձամբ ճանչցած ենք երկար տարիներէ ի վեր և ուրախութեամբ տեսած ենք Ձեր մէջ Հայց. Եկեղեցւոյ հաւատարիմ զաւակի և հայ ազգին նուիրեալ անձի ոգին, վերաբերումը և գործնական ծառայութիւնը:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմօգուտ ազգային եկեղեցական ծառայութեանց, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզ և Ձեր ընտանիքի անդամներուն շնորհէ քաջառողջ կեանք և յարաճուն սպասաւորութիւն ի բարին մեր սիրեցեալ ժողովրդին, Հիսթընի մէջ և Արևելեան Թեմի զարգացման և բարգաւաճման համար:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21 Յուլիսի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 99

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՀԱՄԱԺՈՂՈՎՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏԱՑ ԱՒԱԳ ԴԱՀԼԻՃԻ ՈՐ Ի ՔԱԼԻՖՈՐՆԻԱ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Սրտի գոհունակութեամբ տեղեկացանք Ամերիկահայոց Արևմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վահէ Արքեպիսկոպոս Յովսէփեանէն որ յառաջիկայ Յուլիսի սկիզբը պիտի գումարէք Ձեր տարեկան Համաժողովը:

Քաջատեղեակ ըլլալով Ձեր ազգօգուտ և եկեղեցանուէր ու մարդասիրական գործունէութեանց, սրտի պարտք կը զգանք այսու Հայրապետական Գիրով Ձեզի յղել մեր բոլորի սրտերուն և հոգիներուն մէջ ներկայ եղող և որպէս քրիստոնեայ ազգ մեր հայ ժողովուրդի ծննդավայրը հանդիսացող Ս. Էջմիածնի օրհնութիւնները Մեր խոր սիրոյն և յարգանքին հետ միասին հանդէպ Ձեր մեծ կազմակերպութեան յարատև աշխատանքին:

Մեր ժողովուրդի ասպետական ազնուական ոգիին և առաքինութիւններուն նոր արտայայտութիւն տալու կոչուած Ձեր կազմակերպութիւնը իր հիմնադրութեան օրէն ասդին միշտ զօրավիգ կանգնած է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ և անոր սրբազնագոյն Հոգևոր Կեդրոնը եղող Ս. Էջմիածնին:

Մենք անհունօրէն ուրախ պիտի ըլլանք որ օրէ օր առաւել ևս պտղաբեր դառնայ Վարդանանց Ասպետներու կազմակերպութիւնը և իր լայն աջակցութիւնը բերէ նաև մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր վերարթնութեան և վերածաղկումի շարժումին, մեր նոր և անկախ Հանրապետութեան ազատութեան պայմաններուն տակ:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի և Ձեր բոլոր մասնաճիւղերուն, անդամներուն, և բարեկամներուն շնորհէ բեղմնալից գործունէութիւն և անսպառ ու անստուեր երջանկութիւն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 9 Յունիսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 53

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԻՒՆՆ ՈՐ Ի ԹԵՄԻՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ, Ի ՄՈՆՐԷԱԼ

Որքա՜ն խոր հոգեկան գոհունակութիւն զգացինք երբ իմացանք Ձեր Թեմի Բարեխնամ Առաջնորդ Տ. Ցովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, որ յառաջիկայ Ցուլիսին պիտի գումարէք Ձեր 10-րդ տարեկան Պատգամաւորական ժողովը:

Դուք լաւ գիտէք, որ Մեր սիրտը Ձեզի հետ է: Ամէն տեղ և ամէն ժամանակ դուք ներկայ էք Մեր աղօթքներուն և մտածումներուն մէջ: Երբ անցեալ տարի 1996-ի Ցունուարի վերջերը ձեզ մօտ էինք, դուք զգացիք Մեր սրտակցութիւնը և հայրախնամ հոգածութիւնը ձեր նկատմամբ:

Երիտասարդ էք, այո՛, բայց երիտասարդութիւնը տարիներու գումարի հարց չէ միայն, այլ՝ ոգիի, մօտեցումի, շարժումի, գաղափարի, հաւատքի, գործի՛: Մեր եկեղեցին դարերու կեանք ունի, բայց դարերը չեն մաշեցուցած զայն, որովհետև Աստուծոյ հաւատքը, Քրիստոսի Աւետարանը, մեր հարազատ հայրերու սուրբ աւանդութիւնը յաւիտենական, մշտակենդան արժէքներ են որոնք ծերութիւն և հնութիւն չեն ճանչնար:

Դուք էք որ նոր շունչ պիտի բերէք այս Եկեղեցիին մէջ: Այստեղ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ 17 դարեր մեզի կը նային: Եւ ի՞նչ կը տեսնեն: Քարե՞ր: Ո՛չ: Կը տեսնեն նո՛ր սերունդի զաւակները, որոնք կը պատրաստուին հոգևորական դառնալու, որոնք կուգան աղօթքի և կը ստանան ներշնչման նոր ոյժ և կորով:

Մեր փափաքն է որ դուք ալ այցելէք և տեսնէք մեր հայրենի աշխարհի մէջ թէ ինչպէ՞ս քրիստոնէական հաւատքը կը մնայ ամուր և կենդանի:

Մեր ժողովուրդը ջատ գեղեցիկ առած մը ունի. « *Եթէ ծառը գարնան ծաղկած չէ՝ զուր է անկէ աշնան պտուղ սպասել*» : Գարուն էք դուք: Ծաղկեցէք վառ ու առատ, որպէսզի դառնաք պտղաբեր հայոց « փոքր ածու»ին մէջ:

Մեր ազգը և Եկեղեցին դէպի առաջ կը նային: Ցառաջատեսութեան մեր աչքերը դուք էք:

Ահա թէ ի՜նչ հայրական զգացումներով և մտածումներով կ՚ողջունենք ձեր տասնամեակը և կը մաղթենք որ 10-րդ Համաժողովը դառնայ վերանորոգութեան նոր աղբիւր, որպէսզի ոռոգուին և կանաչնան անդաստանները մեր Գանատայի Տիրախնամ Թեմի կեանքին կրօնական, կրթական մշակութային և ազգային-ընկերային մարզերու մէջ:

Թող Աստուծոյ ամենատես Աչքն ու ամենազօր Աջը հովանի և պահապան ըլլան ձեր վրայ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 9 Ցունիսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 52

To: INSTITUTO NACIONAL SAN MARTINIANO

Խորապէս ուրախացանք իմանալով որ Յունիսի 12-ին յատուկ արժանավայել հանդիսութեամբ դուք արժանի յարգանք և գնահատանք պիտի արտայայտէք հանդէպ Հայաստանի Հանրապետութեան և Պուէնոս Այրէսի «ՊՕՂՈՍ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ» հիմնարկութեան:

Ամբողջ Հայ ժողովուրդի Հոգևոր Կեդրոնէն՝ Ս. Էջմիածնէն կ'ուղղենք Ձեզի Մեր հայրական սիրոյ ողջոյնը ձեր այս գեղեցիկ և օրինակելի մտածումին և արարքին համար:

Մենք քաջատեղեակ ենք Ձօրավար Խօսէ Տէ Սան՝Մարթինի հերոսական դերին Արժանթինի պատմութեան կերտումին մէջ: Մօտէն հետևած ենք նաև «Պօղոս Արզումանեան» հիմնարկութեան բազմաբեղուն բարերարութեանց և մեծարժէք ծառայութեանց որոնցմէ մէկն է *"Արժանթինական Հանրապետութիւն"* դպրոցի վերակառուցումը մեր երկրի մայրաքաղաք Երևանի մէջ:

Մենք բարձօրէն կը գնահատենք նաև այն զօրակցութիւնը որ Արժանթինեան պետութիւնը կը ցուցաբերէ հանդէպ մեր Հայաստանի նորանկախացեալ Հանրապետութեան:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեր կազմակերպութեան շնորհէ նորանոր նուաճումներ վասն բարգաւաճման և յառաջդիմութեան Արժանթինի Հանրապետութեան, յատկապէս մշակութային մարզին մէջ: Թող *«Պօղոս Արզումանեան»* հիմնարկութիւնը դառնայ մշտահոս և առատահոս աղբիւր բարեաց ընդ հսկողութեամբ սիրելի Արմէն և Սիրանոյշ Մեծատուրեան-Արզումանեանի: Թող անմոռանալի Պօղոսի յիշատակը պայծառ մնայ և թող մշտատև կերպով զարգանան Արժանթինի և Հայաստանի պետական բարեկամական յարաբերութիւնները:

Մնամք սիրոյ ողջունիւ և օրհնութեամբ,

Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 10 Յունիսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԵԴՈՒԱՐԴ ՄԻՐԶՈՅԵԱՆԻՆ

Սրտի անհուն գոհունակութեամբ իմացանք Լարք Երաժշտական Ընկերակցութեան նամակէն, որ ներկայ Ցունիս ամսուան ընթացքին արժանավայել հանդիսութիւններով Լոս-Անճելոսի մէջ պիտի նշուի Ձեր երաժշտական ստեղծագործական գործունէութեան յիսնամեայ յոբելեանը, նախաձեռնութեամբ և կազմակերպութեամբ Լարք Երաժշտական Ընկերակցութեան:

Նախ ջերմօրէն կը գնահատենք Լարք Երաժշտական Ընկերակցութիւնը իր այս գեղեցիկ մտածումին և գովելի նախաձեռնութեան համար:

Սիրելի Եդուարդ Միրզոյեան,

Մենք Ձեզ անձամբ ճանչնալու ուրախութիւն ենք ունեցած և Ձեր մէջ տեսած ազնուական հոգիով երաժիշտը, որ գիտցած է անցնող յիսուն տարիներու ընթացքին հաւատարիմ հետևողականութեամբ և յարաճուն վերելքով իր աստուածատուր տաղանդը ի սպաս դնել երաժշտութեան արուեստին, մանաւանդ հայկական երաժշտութեան դարաւոր ժառանգութեան աւելցնելով նոր նուաճումներ, բերելով նոր երանգներ և զայն բարձրացնելով միջազգային մակարդակի: Ձեր տենդագին ստեղծագործական աշխատանքով, ուսուցողական և կազմակերպական ջանքերով, նոր սերունդի առողջ պատրաստութեան գործով անգնահատելի ներդրումներ կատարեցիք մեր Մայր Հայրենիքի մէջ երաժշտական արուեստի ծաղկման և զարգացման բնագաւառներուն մէջ: Ձեր տաղանդին ճառագայթումները տարածուեցան աշխարհի այլազան երաժշտասէր և մշակութային տարածքներուն վրայ, միջազգային չափանիշով, ինչպէս նաև սփիւռքահայ մեր ազգային կեանքի շրջանակներուն մէջ:

Մեր պաշտելի հոգևոր կեդրոնէն և Ձեր այնքան սիրած այս սրբավայրէն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բիւր օրհնութիւն և բիւր բիւրոց գնահատութիւն Ձեր բազմարժէք վաստակին: Կ՚աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի շնորհէ շատ երկար տարիներ, առողջութեան բարիքներով առլցուն, որպէսզի Ձեր տաղանդին և գիտութեան, Ձեր սիրոյն և նուիրուածութեան բարիքները առատանան հայ կեանքին մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 12 Ցունիսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 54

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԵՐ. Տ. ՆՈՒՐՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ ՈՐ Ի ՀԻՍԹԸՆ, ԹԵՔՍԱՍ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Հոգեկան խոր ուրախութեամբ տեղեկացանք Ամերիկահայոց Արևելեան Թեմի Բարեջան Առաջնորդ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանէն, որ Հիւսթընի (Թեքսաս) Ս. Գէորգ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը կը ծրագրէ առաջիկայ Օգոստոսի 17-ին արժանավայել կերպով նշել Ձեր քահանայական ձեռնադրութեան 25-ամեակը:

Որքան հրճուեցուցիչ երևոյթ է Մեզ համար անդրադառնալ որ ահա 25 տարիներէ ի վեր անխոնջ աշխատանքով, հաւատարիմ հետևողականութեամբ և արդիւնալից գործունէութեամբ Ձեր հոգևորականի սպասը անվերապահօրէն կ'ընծայէք Ձեր պաշտելի Եկեղեցիին, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքէն սկսեալ մինչև Եւրոպա (Զուիցերիա և Հոլանտա) և մինչև Ամերիկայի Միացեալ Նահանգներ (Նիւ Եորք և Հիւսթըն):

Քաջատեղեակ ենք որ Դուք Հայց. Եկեղեցւոյ հարազատ ոգիին և աւանդութեան ապրումն ունիք Ձեր մէջ և Ձեր այդ ապրումը գիտէք արտայայտել ամբողջանուէր ծառայութեամբ գործնականօրէն ի սպաս և ի վայելումն մեր հաւատացեալ ժողովրդին:

Ի գնահատութիւն Ձեր քառորդ դարու բեղմնալից հոգևորականի ծառայութեանց և որպէս քաջալերանք Ձեր այժմ ու գալիք սպասաւորութեանց՝ Ձեզի կը շնորհենք

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ԻՆ:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի շնորհէ քաջառողջ կեանք որպէսզի դեռ ևս երկար տարիներ յարաճուն վերելքով շարունակէք Ձեր շնորհները, գիտութիւնն ու ժամանակը ընծայաբերել մեր Ս. Եկեղեցիին: Որքա՜ն, որքա՜ն պէտքն ունի այդ դարաւոր Եկեղեցին երիտասարդ և նուիրեալ ոյժերու: Մեր փափաքն է նաև որ Դուք Ձեր ծառայութիւնը ճոխացնէք հովուական վարչական բաժնին աւելցնելով գրական-հրատարակչական բաժինն ալ, որպէսզի առաւել լայն և մնայուն տարածք գտնէ Ձեր վաստակը Հայ Եկեղեցւոյ անժանգեղի գանձանակին մէջ: Թող Աստուծոյ ամենատես Աչքն ու ամենակարող Աջը հովանի և պահապան ըլլայ Ձեր վրայ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 12 Յուլիսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 66